ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2016 թվականի N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016թվականի հունիսի 22-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> N 517-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2013թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1).<<Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժին>>-ը լրացնել նոր՝ <<առաջատար մասնագետ>> տողով.

2).<<Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժին>>-ից հանել 3-րդ տողը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ***Վ.ԴԱՎԹՅԱՆ***

2016.հունիսի 24
ք. Կապան